

**ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱ
Ներպետական փոփոխությունները, բարեփոխումները և
ազգայնականությունն Ուկրաինայում. Մայրանի
հեղափոխության հետևանքները**

ԱՐԱՄ ԹԵՐԶՅԱՆ

*Բրյուսելի պետական համալսարան, Հայաստան
Եվրասիական հետազոտությունների և վերլուծությունների ինստիտուտ,
ԱՄՆ*

Հոդվածում ուսումնասիրվում է հետմայրանի շրջանում Ուկրաինայի պետականաշինության գործընթացը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում 2014թ. հեղափոխության հիմնական նյութական և գաղափարական արդյունքներին: Ուկրաինայի դեպքի ուսումնասիրության ճանապարհով ցույց է տրվում արտաքին խոչընդոտների առկայության պայմաններում հետհեղափոխական հասարակություններում քաղաքական և տնտեսական վերափոխումների մարտահրավերներն ու հնարավորությունները: Նշվում է, որ հետմայրանի շրջանում Ուկրաինայի պետականաշինության հիմքում ընկած քաղաքական ու տնտեսական վերափոխումները զգալիորեն պայմանավորված են այն հանգամանքով, որ երկիրը հաստատուն ընթացքով շարժվում է Եվրոպական Միության (ԵՄ) ուղղությամբ: Միաժամանակ, ժողովրդավարության կայացման հիմնական խոչընդոտներն են, ի թիվս այլոց, ժողովրդավարական ինստիտուտների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների թուլությունը, ավտորիտար ժառանգությունն ու օլիգարխների տևական ազդեցությունը, որոնք էլ ավելի են խորանում անջատողականության կործանարար հետևանքների արդյունքում: Հետմայրանի շրջանի պետականաշինության առանցքային բաղադրիչներից է Ռուսաստանից հեռացումը, որն ուղեկցվում է ազգայնականության աճով՝ որպես կարևոր գործոն ռուսական «իմպերիալիզմի» դեմ: Եզրակացվում է, որ Ուկրաինայի ներպետական փոփոխությունները դրական ազդեցություն ունեն ԵՄ-ին մոտարկման գործընթացի վրա, սակայն աճող ազգայնականության և ժողովրդավարության կայացման միջև կապը շարունակում է մնալ քննարկման առարկա:

Բանալի բառեր

Մայրանի հեղափոխություն, Ուկրաինա, պետականաշինություն, հետխորհրդային տրանսֆորմացիա, ազգայնականություն

Նախաբան

2014թ. Ուկրաինայում տեղի ունեցած «Մայդանի հեղափոխությունը» զգալիորեն մեծացրեց գիտական հետաքրքրությունը հետխորհրդային հեղափոխությունների, այդ թվում՝ հետհեղափոխական պետականաշինության հետագծի, վերաբերյալ ուսումնասիրությունների նկատմամբ:

Կան բազմաթիվ ուսումնասիրություններ հետխորհրդային հեղափոխությունների հիմքում ընկած քաղաքական և սոցիալ-տնտեսական պատճառների վերաբերյալ: Սակայն, հետխորհրդային հեղափոխությունների նկատմամբ հետաքրքրության աճի ֆոնին համեմատաբար քիչ հետաքրքրություն է առաջացել հետհեղափոխական շրջանի թերությունների և ձախողումների հիմքում ընկած պատճառների վերաբերյալ: Քենեդին նշում է, որ թեև «գունավոր հեղափոխություններն» առաջ բերեցին ժողովրդավարացման վերաբերյալ լավատեսական մեկնաբանությունների ալիք կիսաավտորիտար պետություններում, այսօր ակտիվ քննարկումներ են ծավալվում այն մասին, թե արդյոք այդ «հեղափոխությունները» հանգեցրել են իրական բարեփոխումների: Օգտագործելով դեպքերի համեմատական վերլուծության սինթետիկ վերահսկողության մեթոդը «գունավոր հեղափոխություններին» հաջորդած բարեփոխումները գնահատելու համար՝ Քենեդին պնդում է, որ հեղափոխության արդյունքները մեծապես պայմանավորված են քաղաքական ցնցումներին նախորդած ազդեցություններով¹: Ուեյը նշում է, որ Արևելյան և Կենտրոնական Եվրոպայում տեղի ունեցած «գունավոր հեղափոխությունների» արդյունքում ժողովրդավարությանն անցման երկրորդ ալիքի վերլուծությունը մեծամասամբ կենտրոնացած է այնպիսի պատճառահետևանքային փոփոխականների վրա, ինչպիսիք են տարածաշրջանային դիֆուզիան, առաջնորդների ռազմավարությունը և համաժողովրդական բողոքի ցույցերը: Մինչդեռ,

¹ **Kennedy R.**, Fading Colours? A Synthetic Comparative Case Study of the Impact of “Colour Revolutions”, *Comparative Politics*, 2014, 46, 3, 273-92.

հեղափոխությունների անատոմիան հասկանալու համար կարևոր է դիտարկել երկարաժամկետ փոփոխականներ, ինչպիսիք են, օրինակ, պետության ու կուսակցությունների ներուժը և Արևմուտքի հետ այդ երկրների կապը²:

«Մայդանն» ակնհայտորեն առանձնանում է մյուս հետխորհրդային հեղափոխություններից՝ որպես «հակախորհրդային վերջին իրական հեղափոխություն, որը վիճարկում էր խորհրդային և հետխորհրդային հասարակության ու մշակույթի վերլուծության նկատմամբ ոչ վիճահարույց, կոնֆորմիստական և «զգայական առումով դրական» մոտեցումները»³: «Մայդանը» ոչ միայն արտահայտեց ուկրաինացիների ընտրությունը հոգուտ Եվրոպայի, այլև դրեց ուկրաինական նոր ինքնության հիմքերը⁴:

Որոշ հետազոտություններում իրականացվել է հետխորհրդային տրանսֆորմացիայի մի քանի ասպեկտների արժեքավոր վերազնահատում: Թորոսյանը և Սուքիասյանն ընդգծում են հետխորհրդային տրանսֆորմացիայի ոչ գծային, համակարգային և բազմավեկտոր բնույթը: Նշվում է, որ ԵՄ-Ռուսաստան մրցակցությունն ընդհանուր հարևանությունում դարձել է հետխորհրդային տրանսֆորմացիայի վրա ազդելու կարևոր գործոն: Ուստի, ընդհանուր հարևանների (Ուկրաինա, Հայաստան, Վրաստան, Մոլդովա) եվրոպական կամ եվրասիական ընտրությունը վճռորոշ նշանակություն ունի հետխորհրդային տրանսֆորմացիայի ավարտի ազդարարման համար⁵:

Ընդհանուր առմամբ, խնդրի վերաբերյալ առկա գրականության հիմնական թերություններից մեկն այն է, որ սոցիալական

² **Way L.**, The Real Causes of the Color Revolutions, *Journal of Democracy*, 2008, 19, 3, 55-69.

³ **Zhuk S. I.**, Ukrainian Maidan as the Last Anti-Soviet Revolution, or the Methodological Dangers of Soviet Nostalgia (Notes of an American Ukrainian Historian from Inside the Field of Russian Studies in the United States), *Ab Imperio*, 2014, 3, 195-208.

⁴ **Diuk N.**, The Maidan and Beyond: Finding Ukraine, *Journal of Democracy*, 2014, 25, 3, 83-89.

⁵ **Torosyan T., Sukiasyan H.**, Three Stages of Post-Soviet Transformation, Three Groups and Paradigms, *Armenian Journal of Political Science*, 2014, 1, 20-34.

փոփոխությունների դիտարկման ժամանակ առավելություն է տրվում կա՛մ կառուցվածքին, կա՛մ դերակատարներին: Հողվածում առաջարկվում է ավելի դինամիկ մոտեցում, այն է՝ դերակատարների փոխազդեցության ուսումնասիրություն փոփոխությունների դիտարկման համատեքստում:

Ուկրաինայի հետհեղափոխական պետականաշինության հիմնական առանձնահատկություններն են ԵՄ-ին զգալի մոտարկումը և դրանից բխող տնտեսական ու քաղաքական բարեփոխումները, ինչպես նաև ազգայնականության աճը՝ Ռուսաստանից զգալի հեռացման ճանապարհով: Միաժամանակ, հետմայդանի շրջանում Ուկրաինայում ժողովրդավարության և ազգայնականության միջև կապը դեռևս հստակեցված չէ:

Հետհեղափոխական պետականաշինության հիմնական խոչընդոտները կարելի է դասակարգել երկու խմբի. ներքին գործոններ, ինչպիսիք են ինստիտուտների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների թուլությունը, և արտաքին խոչընդոտներ, որոնք գլխավորապես պայմանավորված են Ռուսաստանի հետ ունեցած կոնֆլիկտով⁶:

Ուկրաինայի դեպքի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս վերհանել հետհեղափոխական պետականաշինության մարտահրավերներն ու հնարավորությունները՝ ԵՄ-Ռուսաստան հակասական հարաբերությունների համատեքստում: Դա դրսևորվում է Կրեմլի՝ իր «անմիջական հարևանների» նկատմամբ վերահսկողության մեծացման անզիջում ջանքերի և պետականաշինության ու հակամարտության կարգավորման գործընթացներում Բրյուսելի սահմանափակ դերակատարության միջև առկա բարդ փոխազդեցությամբ⁷: Հողվածում ուսումնասիրվում են հետխորհրդային պետությունների ներքին փոփոխությունների

⁶ **Kuczyńska-Zonik A., Kowalczyk J.** Nation-Building in Post-Maidan Ukraine, *The Polish Quarterly of International Affairs*, 2016, 3, 91-105.

⁷ **Kuzio T.**, Ukraine between a Constrained EU and Assertive Russia, *Journal of Common Market Studies*, 2017, 55, 1, 103-120; **Maass A. S.**, The Actorness of the EU's State-Building in Ukraine - before and after Crimea, *Geopolitics*, 2019, 1-20.

դինամիկան և տնտեսական ու քաղաքական բարեփոխումների իրականացման մարտահրավերները:

Հետազոտության խնդիրն է պարզել 1) հետհեղափոխական Ուկրաինայում տնտեսական և քաղաքական բարեփոխումների իրականացման հիմնական մարտահրավերները, 2) «հետմայդանի» շրջանում Ուկրաինայի ինքնության ձևավորման հիմնական առանձնահատկությունները:

Հոդվածում օգտագործվել են քաղաքականության վերլուծության և գործընթացներին հետևելու (process-tracing) մեթոդները՝ Ուկրաինայի հետհեղափոխական պետականաշինության զարգացումն ուսումնասիրելու համար: Հետազոտության էմպիրիկ փաստարկման համար հիմք են հանդիսացել թերթերում տպագրված հոդվածները, քաղաքական ելույթների վերաբերյալ դիտարկումները, պաշտոնական փաստաթղթերը և հարցազրույցները:

Հետհեղափոխական պետականաշինության քաղաքական չափումները

Ուկրաինայում հետհեղափոխական պետականաշինության վերաբերյալ կարևոր հարցերից մեկն այն է, թե արդյոք ներպետական փոփոխությունները կհանգեցնեն ժողովրդավարության կայացմանը՝ այդպիսով ազդարարելով հետխորհրդային տրանսֆորմացիայի ավարտը:

Հեյլը նշում է, որ վարչակարգային ցիկլերը հասարակ երևույթ են հետկոմունիստական աշխարհում, երբ որոշ պետություններ փորձում են անցում կատարել ավտոկրատիայից ժողովրդավարության, ապա վերադառնում են ավելի խորը ավտոկրատիայի, այնուհետև գունավոր հեղափոխությունների ճանապարհով՝ կրկին ժողովրդավարության⁸: Նրա հետազոտությունը կենտրոնացած է հովանավորչական նախագահական համակարգի վրա՝ ցիկլային դինամիկայի և հիբրիդային վարչակարգերի ուսումնասիրության

⁸ **Hale H. E.**, Regime Cycles: Democracy, Autocracy, and Revolution in Post-Soviet Eurasia, *World Politics*, 2005, **58**, 1, 133-165.

նպատակով: Հովանավորչական քաղաքականության տեսության հիմքում ընկած է հետևյալն իստական վարչակարգերի միտումը՝ վերադառնալու ավտոկրատ, կոռումպացված, անձնավորված և հովանավորչության վրա հիմնված կառավարման ձևերին⁹: Հովանավորչական նախագահական կառավարման համակարգերում ֆորմալ մեխանիզմները, ինչպիսիք են սահմանադրությունն ու ընտրությունները, կարևոր են այնքանով, որ ձևավորում են քաղաքական խաղի գլխավոր մասնակիցների ակնկալիքները¹⁰:

Հովանավորչական քաղաքականության վառ օրինակ է Ուկրաինան, որտեղ գերակշռում են ոչ ֆորմալ ցանցային համակարգերը և հովանավոր-հովանավորյալ հարաբերությունները, որոնք վեր են ֆորմալ կանոններից, խոչընդոտում են բարեփոխումների իրականացման գործընթացը և սահմանափակում են պետության մոտարկումը Եվրոպային¹¹:

Ուստի, «հետմայդանի» շրջանի պետականաշինությունը և, մասնավորապես, ժողովրդավարության կայացումը մեծապես կապված են ազդեցիկ ներպետական դերակատարների հետաքրքրությունների, ընկալումների և նախասիրությունների, ինչպես նաև ժողովրդավարական ինստիտուտներ զարգացնելու նրանց կարողությունների հետ:

Պետական ու միջազգային իրադարձությունները, ներառյալ՝ ճգնաժամերը և աստիճանական ճնշումները, քաղաքական առաջնորդների առջև բացում են լայն հնարավորություններ՝ գոյություն ունեցող ինստիտուտները վերափոխելու համար¹²: Լայնամաս-

⁹ Նույն տեղում:

¹⁰ **Remington T.F.**, Henry E. Hale. Patronal Politics: Eurasian Regime Dynamics in Comparative Perspective, *East/West: Journal of Ukrainian Studies*, 2016, **3**, 2, 209-212.

¹¹ **Sydorchuk O., Haran O.**, Ukraine after Euromaidan: Increased Pluralism amid Patronal Politics, 2018, http://ekmair.ukma.edu.ua/bitstream/handle/123456789/15637/Sydorchuk_Ukraine_after_Euromaidan_Increased_Pluralism.pdf?sequence=1&isAllowed=y (11.01.2020).

¹² **Cortell A.P., Peterson S.**, Altered States: Explaining Domestic Institutional Change, *British Journal of Political Science*, 1999, **29**, 1, 177-203.

շտաբ, համակարգային փոփոխությունները հնարավորություն են տալիս իրականացնել արմատական վերափոխումներ, իսկ փոքրամասշտաբ, կոնկրետ խնդիրների առնչվող փոփոխությունները ստեղծում են վերափոխման ավելի սահմանափակ հնարավորություններ: Միաժամանակ, այդ հնարավորությունների օգտագործումը կախված է պետական պաշտոնյաների գործողություններից և շահերից¹³:

Ուստի, ժողովրդավարական բարեփոխումների խորությունն ու կայունությունը զգալիորեն կախված են Վլադիմիր Ջելենսկու կառավարության՝ պետականաշինությունն ինստիտուցիոնալացնելու, քաղաքական կամքից: Այլ կերպ ասած, հովանավորչական քաղաքականությունից հրաժարումը «հետմայրանի» պետականաշինության առաջնահերթություններից է:

Ջելենսկին օգտագործեց իր մեծ ժողովրդականությունը և արտահերթ ընտրությունների միջոցով զգալիորեն ամրապնդեց իր իշխանությունը: Նրան հաճախ բնորոշում են որպես «փրկիչ», ով ի վիճակի է փոխել Ուկրաինայում ստեղծված աղետալի իրավիճակը և դնել բարգավաճման ու ժողովրդավարության հիմքերը: Միաժամանակ, խարիզմատիկ առաջնորդի ձեռքում կենտրոնացած հսկայական իշխանությունը կարող է հանգեցնել չարաշահումների՝ ուժեղ ընդդիմության և կենսունակ քաղաքացիական հասարակության բացակայության պայմաններում: Ջելենսկու դիսկուրսում քաղաքական վարչակարգը բնորոշվում է որպես «ժողովրդի կառավարություն» կամ «ժողովրդի ծառա»՝ ներկայացնելով կառավարման նոր ձև, այն է՝ պետության և հասարակության միջև գերժողովրդավարական փոխգործակցություն:

Ուկրաինայի նախագահը հեռավորություն է պահպանում իր նախորդներից, քանի որ լի է վճռականությամբ՝ իշխանության բերելու այնպիսի մարդկանց, ովքեր «կծառայեն ժողովրդին»¹⁴:

¹³ Նույն տեղում:

¹⁴ **Volodymyr Zelenskyy's** Inaugural Address, May 20, 2019, <https://www.president.gov.ua/en/news/inavguracijna-promova-prezidenta-ukrayini-volodimira-zelensk-55489> (17.01.2020).

Սակայն, հարկ է նշել, որ Ուկրաինայում ժողովրդավարական բարեփոխումների հաջողությունը մեծապես պայմանավորված է խարիզմատիկ ղեկավարումից անցմամբ գործունակ ժողովրդավարական ինստիտուտների: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է, որ Ուկրաինայի քաղաքացիական հասարակությունը հաղթահարի սեփական սահմանափակումները՝ կառավարությանը հաշվետու դարձնելու համար:

Հատկանշական է, որ վերջին շրջանում Ուկրաինայում աճում է քաղաքացիական ակտիվությունն, ինչն առավել ցայտուն դրսևորվեց Մայդանի հեղափոխության ժամանակ: Ի տարբերություն նախկին քաղաքացիական նախաձեռնությունների, որոնք ընկած էին 2004թ. Նարնչագույն հեղափոխության հիմքում, Եվրամայդանի ժամանակ քաղաքացիական ակտիվությունն այլ դրսևորում ունեցավ: Այն ավելի անկայուն էր, ոչ ֆորմալ, հորիզոնական և տարաբնույթ՝ ներթափանցելով հասարակական կյանքի տարբեր ասպեկտներ¹⁵: Այդուհանդերձ, կենսունակ քաղաքացիական հասարակության ձևավորման համար իրական խթան կարող է դառնալ վրդովմունքի վրա հիմնված քաղաքացիական ակտիվիզմի վերափոխումն արժեքների վրա հիմնված և կոնկրետ հարցերի վրա կենտրոնացած քաղաքացիական հասարակության, որն ի վիճակի է հասկանալ, ձևակերպել և ներկայացնել խնդիրներ, առաջ քաշել հիմնավորված պահանջներ ու հետևել դրանց բավարարմանը:

Մնազլին իրավացիորեն նշում է, որ հասարակական կազմակերպությունները և ակտիվիստները պետք է դուրս գան փողոցում տարած հաղթանակի սահմաններից և հաղթանակ գրանցեն քաղաքային խորհուրդներում և ընտրություններում¹⁶:

¹⁵ **Shapovalova N, Burluk O.** Civil Society and Change in Ukraine Post-Euromaidan: An Introduction. *Civil society in post-Euromaidan Ukraine: from revolution to consolidation* 2018, 193, pp. 11-38.

¹⁶ **Smagliy K,** A wake up call for Ukraine's civil society, *Kennan Cable*, 25, <https://www.wilsoncenter.org/publication/kennan-cable-no25-wake-call-for-ukraines-civil-society> (17.01.2020).

Քաղաքացիական հասարակության խմբերի ներդրումը հետմայդանի շրջանի բարեփոխումների գործընթացում անհնար է թերագնահատել: Ամենախոշոր և տեսանելի բարեփոխումների ցանցը՝ «Բարեփոխումների վերակենդանացման փաթեթը»՝ կազմված է 80 ՀԿ-ներից, բարեփոխումների հարցերով զբաղվող 22 խմբից և 300 փորձագետներից, ովքեր զարգացնում, խթանում և որոշ դեպքերում նույնիսկ իրականացնում են դատական, հակակոռուպցիոն և տնտեսական փոփոխություններ¹⁷: ՀԿ-ները պարտավոր են վերահսկել կոռուպցիայի դեմ պայքարի երկու խոշոր գործակալությունների՝ Ուկրաինայի ազգային հակակոռուպցիոն բյուրոյի (NABU) և Կոռուպցիայի կանխարգելման ազգային գործակալության (NAPC) ստեղծումը ու ապահովել թափանցիկությունն ու հաշվետվողականությունը:

ԵՄ զեկույցներում նշվում է, որ Ուկրաինայի քաղաքացիական հասարակությունը «շարունակում է ակտիվ դեր խաղալ բարեփոխումների խթանման, նախագծման և վերահսկման գործում, հատկապես՝ կոռուպցիայի դեմ պայքարի, դատական համակարգի, մարդու իրավունքների, ապակենտրոնացման, էներգետիկայի և առողջապահության ոլորտներում... Ուկրաինայի քաղաքացիական հասարակության կազմակերպությունները շարունակում են ակտիվորեն մասնակցել Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության պլատֆորմի և ԵՄ-Ուկրաինա քաղաքացիական հասարակության պլատֆորմի աշխատանքներին, որը նախատեսված է Ասոցացման համաձայնագրով»¹⁸:

Չնայած այս ձեռքբերումներին, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների որոշակի գործողություններ հանգեցրել են հակասական եզրակացությունների: Մասնավորապես, Ուկրաինայում գործող որոշ ՀԿ-ներ փորձել են սերտ համագործակցություն հաստատել այնպիսի խոշոր օլիգարխների հետ,

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ **European Commission**, Association Implementation Report on Ukraine, 2018, https://eeas.europa.eu/sites/eeas/files/2018_association_implementation_report_on_ukraine.pdf (17.01.2020).

ինչպիսիք են Իգոր Կոլունոյսկին և Վիկտոր Պինչուկը: Մինակովը նշում է, որ քաջ գիտակցելով քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներուժը, օլիգարխիկ խմբերը պարբերաբար փորձել են դրանք օգտագործել իրենց հարստությունն ու քաղաքական իշխանությունը պահպանելու նպատակով¹⁹: Արդյունքում, որոշ հետազոտողներ պնդում են, որ թեև Ուկրաինայի քաղաքացիական հասարակությունն ուղղորդում էր «հեղափոխությունները», հեղափոխական պահերն այդպես էլ չհանգեցրեցին ժողովրդավարական շարժումների²⁰:

Հարց է առաջանում, թե հեղափոխական պահի ավարտից հետո Ուկրաինայի քաղաքացիական հասարակությունն ինչ դերակատարություն ունի էվոլյուցիոն փոփոխություններ ապահովելու գործում: Այդ հարցին պատասխանելու համար Շապովալովան և Բուրյուկն ընդգծում են քաղաքացիական հասարակության զարգացման երկու չափումներ: Առաջինը վերաբերում է պետության և հասարակության հետ քաղաքացիական հասարակության հարաբերությունների բնույթի փոփոխություններին և դրաներուժին ու կարողությանը՝ իրականացնելու բարեփոխումներ, կամ այն ինչ անվանում ենք «փոփոխություն դրսից»: Երկրորդ չափումը վերաբերում է քաղաքացիական հասարակության բնույթին՝ կազմակերպման ու գործարկման ձևին, կամ, այլ կերպ ասած, «փոփոխությանը ներսից»²¹: Այդ փոփոխությունները շատ կարևոր են Ուկրաինայի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ակտիվության մեծացման համար: Դա, իր հերթին, մեծապես կապված է քաղաքացիական հասարակության կազմակերպություններում և ցանցային համակարգերում ինստիտուցիոնալ ու մասնագիտական համապատասխան կարողություն-

¹⁹ **Minakov M.**, Changing civil society after Maidan. In *Danyliw Seminar on Contemporary Ukraine, University of Ottawa*, 2014, https://www.academia.edu/9050237/Changing_Civil_Society_after_Maidan_-_2014 (17.01.2020).

²⁰ **Worschech, S.**, New Civic Activism in Ukraine: Building Society from Scratch?, *Kyiv-Mohyla Law and Politics Journal*, 3, 2017, 23-45.

²¹ **Shapovalova N, Burlyuk O**, նշվ. աշխ.:

ների զարգացման հետ՝ քաղաքականության մշակման և դրա իրականացման վրա ազդելու համար²²: Ինչ վերաբերում է տեղի ազդեցիկ խմբերի բացասական ազդեցությանը Ուկրաինայում տեղի ունեցող վերափոխումների վրա, ապա ակնհայտ է, որ բարեփոխումների գործընթացում օլիգարխների դիմակայության հաղթահարումը Ուկրաինայում ժողովրդավարության կայացման հիմնական մարտահրավերներից է: 1990-ական թվականների երկրորդ կեսին օլիգարխիկ խմբերի ազդեցությունը եղել է Ուկրաինային բնորոշ առանձնահատկություններից մեկը: Չնայած խոշոր օլիգարխների շրջանում ուժերի հավասարակշռության փոփոխություններ եղել են, սակայն նրանցից շատերը դեռևս պահպանում են իրենց ազդեցիկ և արտոնյալ դիրքը: Օլիգարխները տիրապետում են պաշտոնատար անձանց վրա ազդելու հզոր գործիքների, քանզի նրանց վերահսկողության տակ են գտնվում երկրի հիմնական տնտեսական ակտիվներն ու լրատվամիջոցները²³: Օլիգարխիայի արմատներն այնքան խորն են, որ ստեղծվել է որոշ օլիգարխների (Ռենատ Ախմետով, Ռենատ Ֆիրթաշ) նվազող ազդեցությամբ պայմանավորված վակուում, որը միանգամից լցվել է այլ օլիգարխներով (օրինակ, Իգոր Կոլոմոյսկի)²⁴: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Մայդանի հեղափոխությունից ի վեր առաջատար գործարար խմբերի միջև մենաշնորհների բաժանումը շարունակվել է, և դանդաղ առաջընթաց է գրանցվել ապամենաշնորհայնացման գործում²⁵: Ուստի, կարելի է արձանագել, որ թեև 2014 թվականից ի վեր օլիգարխների դիրքերը զգալիորեն թուլացել են, նրանք

²² Նույն տեղում:

²³ **Konończuk W.**, Oligarchs after the Maidan: the old system in a 'new' Ukraine, 2015, <https://www.osw.waw.pl/en/publikacje/osw-commentary/2015-02-16/oligarchs-after-maidan-old-system-a-new-ukraine> (11.01.2020).

²⁴ **Terzyan A.**, Ukrainian Lessons, Armenian Hopes: On the Challenges to Democratic Reforms in Post-Maidan Ukraine and Post-Velvet Revolution Armenia, November 11, 2019 <http://neweasterneurope.eu/2019/09/19/ukrainian-lessons-armenian-hopes/> (17.01.2020).

²⁵ **Lough J. and Dubrovskiy V.**, Are Ukraine's Anti-Corruption Reforms Working?, *Research Paper. Russia and Eurasia Programme*, 2018, <https://www.chathamhouse.org/sites/default/files/publications/research/2018-11-19-ukraine-anti-corruption-reforms-lough-dubrovskiy.pdf> (17.01.2020).

շարունակում են պահպանել կարևոր ազդեցություն Ուկրաինայի տնտեսության և քաղաքականության մեջ: Թեև նախկին նախագահ Պորոշենկոն փորձում էր հավասարակշռել տարբեր օլիգարխների շահերը, նա շարունակում էր լինել նրանցից մեկը և իր բիզնես հետաքրքրությունների շրջանակն ընդլայնել էր գյուղատնտեսության, անվտանգության և էներգետիկայի ոլորտներում: Միաժամանակ, Պորոշենկոյի շահերի ենթադրյալ բախումը հանգեցրեց հասարակության վստահության նվազմանը կենտրոնական կառավարության նկատմամբ²⁶: Որոշ հետազոտողներ նշում են, որ Ուկրաինայի օլիգարխները կիրառում են ոչ թե «օրենքի գերակայության», այլ «գերակայություն՝ օրենքի միջոցով» սկզբունքը: Միաժամանակ, համակարգային և, մասնավորապես, դատական համակարգում առկա կոռուպցիայի պայմաններում օրենքը դառնում է «ապրանք, որը կարելի է ձեռք բերել»²⁷:

Օլիգարխները, որպես կանոն, ընտրողաբար աջակցում են այն նոր օրենքներին ու բարեփոխումներին, որոնք նպաստավոր են իրենց հարստությունը պահպանելու և մեծացնելու համար և կոշտ հակադրություն են ցույց տալիս նրանց, որոնք որևէ կերպ կարող են վտանգել իրենց դիրքերը²⁸: Ուստի, Ջեյնսկու ներպետական օրակարգն առաջ մղելու համար կարևոր է ժողովրդավարական բարեփոխումներին գուզընթաց օլիգարխների ազդեցության թուլացումը Ուկրաինայի տնտեսության և քաղաքականության վրա:

²⁶ **European Parliament**, The state of implementation of the associations and free trade agreements with Ukraine, Georgia and Moldova with a particular focus on Ukraine and systemic analysis of key sectors, 2017, [http://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2017/603836/EXPO_STU\(2017\)603836_EN.pdf](http://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2017/603836/EXPO_STU(2017)603836_EN.pdf) (17.01.2020).

²⁷ **Bayramov A., Marusyk Y.**, Ukraine's Unfinished Natural Gas and Electricity Reforms: One Step Forward, Two Steps Back, *Eurasian Geography and Economics*, **60**, 1, 2019, 1-24.

²⁸ Նույն տեղում:

Հետմայդանի շրջանի պետականաշինության տնտեսական բաղադրիչը

Հաշվի առնելով այն, որ Մայդանի հեղափոխության պատճառներից էին նաև Ուկրաինայի ոչ պատշաճ գործարկվող տնտեսությունը և տնտեսական հնարավորությունների բացակայությունը, տնտեսական բարեփոխումները դրվեցին կառավարության օրակարգի հիմքում: Ակնհայտ է, որ Ուկրաինան ունի հիմնարար տնտեսական բարեփոխումների կարիք, որոնք վճռորոշ նշանակություն ունեն կայուն տնտեսական աճի ապահովման համար: Տնտեսության վերակառուցումը հղի է տնական, երկրի համար կործանարար նշանակություն ունեցող ճգնաժամի ծանր հետևանքներով: Հարկ է նշել, որ հետմայդանի շրջանի առաջին տարիներին Ուկրաինան ունեցել է տնտեսական անկում՝ ՀՆԱ-ի 12 տոկոսի չափով²⁹, և արտաքին պարտքի աճ՝ 78.6-ից մինչև 131.5 տոկոս³⁰: Թեև 2017թ. Ուկրաինայի տնտեսության մեջ գրանցվեց որոշակի աճ, տնտեսական ծանր իրավիճակը հանգեցրեց կենսամակարդակի անկմանը՝ խորացնելով անհավասարությունը³¹:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2014թ. Մայդանի հեղափոխությունից ի վեր իրականացվող տնտեսական բարեփոխումները ներառում են էլեկտրաէներգիայի սակագների, սոցիալական աջակցության, պետական գնումների թափանցիկության մեծացման, բիզնես կարգավորումների պարզեցման, կոռուպ-

²⁹ Ukraine economy to fall? Gross domestic product to shrink by 12%, says World Bank, May 10, <https://www.ibtimes.com/ukraine-economy-fall-gross-domestic-product-shrink-12-says-world-bank-2126818> (10.01.2020).

³⁰ **Fedorenko K.**, Ukraine Four Years after the Euromaidan, 2017, <https://www.wilsoncenter.org/blog-post/ukraine-four-years-after-the-euromaidan> (17.01.2020).

³¹ Ukraine's other war: the battle against systemic corruption, May 31, 2018, <https://worldview.stratfor.com/article/ukraines-other-war-battle-against-systemic-corruption> (17.01.2020).

ցիայի դեմ պայքարի ինստիտուտների և պետական պաշտոնյաների ակտիվների հայտարարագրման ուղղությամբ փոփոխություններ³²:

ԵՄ-ի հետ Ասոցացման համաձայնագրի ստորագրումն ակնհայտորեն Ուկրաինայի համար ստեղծեց նոր հնարավորություններ՝ լայնամասշտաբ տնտեսական բարեփոխումներ իրականացնելու համար: Այն ներառում է երկկողմ համագործակցության համապարփակ օրակարգ և պարտադիր դրույթներ, որոնք ուղղված են ԵՄ կանոնների և արժեքների ներմուծմանը³³:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Ուկրաինայում բարեփոխումների իրականացման գործընթացը հաջողվել է այն ժամանակ, երբ երկիրն առերեսվել է ԵՄ-ի առաջադրած հստակ պահանջներին³⁴: Մասնավորապես, Ուկրաինան զգալի առաջընթաց է գրանցել էներգետիկայի, պետական գնումների, պետական կառավարման և իրավապահ ոլորտի բարեփոխումների ուղղությամբ³⁵: Էներգետիկ ոլորտի հետ կապված խնդիրներն առանցքային նշանակություն ունեն ԵՄ-Ուկրաինա համագործակցության շրջանակներում: Պորոշենկոյի կառավարությունն առանձնահատուկ կարևորում էր գազային ոլորտի բարեփոխումները՝ որպես Ռուսաստանի «էներգետիկ զենքին» դիմակայելու հնարավորություն: Ուստի, երկիրը վճռական քայլեր է ձեռնարկել բնական գազի սուբսիդիաների կրճատման ուղղությամբ, որոնք նախկինում չարաշահել են ուկրաինական էլիտաները՝ ընտրական աջակցություն սպահովելու նպատակով³⁶:

³² The World Bank in Ukraine, 2019, <https://www.worldbank.org/en/country/ukraine/overview> (17.01.2020).

³³ **Petrov R., Van Elsuwege P.**, What does the Association Agreement mean for Ukraine, the EU and its Member States? A Legal Appraisal, *A Legal Appraisal. Het eerste raadgevend referendum. Het EU-Oekraïne Associatieakkoord* (Montesquieu Institute, Den Haag), 2016, pp. 71-88.

³⁴ **Fedorenko K.**, նշվ. աշխ.:

³⁵ **European Parliament**, նշվ. աշխ.:

³⁶ Energy Reform A Central Issue in Ukraine's Presidential Elections March 27, 2019, <https://www.forbes.com/sites/trapier/2019/03/27/energy-reform-a-central-issue-in-ukraines-presidential-elections/#3fee5b554b46> (17.01.2020).

ԵՄ-ն աջակցում է Ուկրաինայի կառավարության ջանքերին՝ ուղղված գազային ոլորտի բարեփոխումներին: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ուկրաինական գազի պահեստավորման համակարգի ամրապնդմանը և փոխադրումների համակարգի նոր օպերատորի համար բիզնես մոդելի զարգացմանը³⁷: ԵՄ զեկույցներում նշվում է, որ իրավական մոտարկման տեսանկյունից Ուկրաինան որդեգրել է էներգետիկ գործունեության ռազմավարություն, և ընդունվել են մի շարք օրենքներ, որոնք վերաբերում են էներգաարդյունավետությանը, վառելիքի դիվերսիֆիկացմանը, վերականգնվող էներգետիկայի և շրջակա միջավայրի պաշտպանության հարցերին³⁸: 2016թ. նոյեմբերին Ուկրաինան և ԵՄ-ն ստորագրեցին էներգետիկ ոլորտում ռազմավարական գործընկերության վերաբերյալ փոխըմբռնման հուշագիր, որի նպատակն էր խթանել Ուկրաինայի լիարժեք ինտեգրումը ԵՄ էներգետիկ շուկային, ինչպես նաև մեծացնել էներգետիկ անվտանգությունն ու շրջակա միջավայրի կայունությունը³⁹:

ԵՄ-ն նպաստել է Ուկրաինայի էներգետիկ ոլորտի բարեփոխումներին «EU4Energy» նախաձեռնության միջոցով, որը ներառում է ԵՄ տեխնիկական աջակցության քառամյա ծրագիր (2016-2020): Ծրագիրն առանձնահատուկ կենտրոնացած է Արևելյան գործընկերության երկրների իրավական մոտարկման վրա: Դրա նպատակն է ստեղծել էլեկտրահենթրալի և գազի շուկաներ՝ խթանելով էներգաարդյունավետությունը⁴⁰: Էներգետիկ ոլորտում երկկողմ գործընկերությունն ամրապնդվեց 2019 թվականի հունիսին, երբ Ուկրաինայի Գերագույն ռադան վավերացրեց Ուկրաինայի և Եվրամիության

³⁷ Energy Reforms: the Challenge for Ukraine's Gas Market, December 19, 2018 <https://www.euneighbours.eu/en/east/eu-in-action/stories/energy-reforms-challenge-ukraines-gas-market> (17.01.2020).

³⁸ **European Commission**, Association Implementation Report on Ukraine, 2018, https://eeas.europa.eu/sites/eeas/files/2018_association_implementation_report_on_ukraine.pdf (17.01.2020).

³⁹ Mission of Ukraine to the European Union, Energy Cooperation, 2017, <https://ukraine-eu.mfa.gov.ua/en/ukraine-eu/sectoral-dialogue/energy> (17.01.2020).

⁴⁰ EU4 Energy Governance, <https://www.energy-community.org/regionalinitiatives/EU4Energy.html> (17.01.2020).

միջև Ասոցացման համաձայնագրի XXVII հավելվածը, որը վերաբերում է վերականգնվող էներգետիկային⁴¹: Այն նախատեսում է ԵՄ էներգետիկ կանոնների ներմուծում Ուկրաինա՝ նպատակ ունենալով ապահովել վերջինիս ինտեգրումը ԵՄ էներգետիկ շուկային⁴²: Էներգետիկայի վերաբերյալ հավելվածի վավերացումն առանցքային նշանակություն ունի ԵՄ պահանջներին և քաղաքականությանը Ուկրաինայի համապատասխանության տեսանկյունից:

Բայրամովը և Մարուսիկը նշում են, որ թեև իրականացվել են բնական գազի և էլեկտրաէներգիայի ուղղությամբ կարևոր բարեփոխումներ, Ուկրաինան դեռևս զգալի աշխատանք պետք է կատարի՝ էներգետիկ ոլորտի ապագան ապահովելու համար⁴³: Փոքր առաջընթաց է գրանցվել Ուկրաինայի էներգետիկ համակարգերի վերափոխման և արդիականացման ուղղությամբ, ինչն էլ ավելի է բարդացնում այն հանգամանքը, որ Ուկրաինայի էլիտաները ընտրողական քաղաքականություն են իրականացնում եվրոպական օրենքների նկատմամբ: Մասնավորապես, չնայած պաշտոնական Ուկրաինան հայտարարել է, որ երկրի էներգետիկ ոլորտը բաց է խորը եվրոպականացման համար, երկրի էլիտաների արմատացած նախապատվությունները շարունակում են մնալ անթափանց գազի առևտրային համակարգի հիմքում: Ուստի, Զելենսկու կառավարության առջև ծառայած է այն հարցը, թե արդյոք այն ունի բավարար ներուժ ու քաղաքական կամք՝ ԵՄ-ի աջակցությամբ էներգետիկ բարեփոխումները լիարժեք իրականացնելու համար⁴⁴:

Ավելի լայն տնտեսական բարեփոխումների տեսանկյունից, հատկանշական է այն, որ Ասոցացման համաձայնագրի/ԽՀԱԱԳ-ի անցումային կիրառման արդյունքում ԵՄ-ն դարձավ Ուկրաինայի խոշորագույն առևտրային գործընկերը՝ ներկայացնելով երկրի

⁴¹ Verkhovna Rada adopted an updated energy Annex to the Association Agreement <https://www.kmu.gov.ua/en/news/verhovna-rada-uhvalila-onovlenij-energetichnij-dodatok-do-ugodi-pro-asociaciyu> (17.01.2020).

⁴² Նույն տեղում:

⁴³ Bayramov A., Marusyk Y., նշվ. աշխ., էջ 1-24:

⁴⁴ Նույն տեղում:

արտաքին առևտրի 42 տոկոսը⁴⁵: 2017թ. ԵՄ-ից Ուկրաինա արտահանումը և Ուկրաինայից ԵՄ ներմուծումն աճել է համապատասխանաբար 22 և 27.2 տոկոսով⁴⁶: Ավելին, վերջին տարիներին Ուկրաինան դանդաղ տեմպերով բարելավել է իր բիզնես միջավայրը: Համաշխարհային բանկի «Doing Business» հետազոտության համաձայն, 2018թ. Ուկրաինան զբաղեցրել է 76-րդ տեղը, ի տարբերություն 2017 թվականի, երբ այն 80-րդ տեղում էր և 2010 թվականի՝ 142-րդ տեղում⁴⁷: Հատկանշական է, որ 2014 թվականից ի վեր ԵՄ-ն և Եվրոպական ֆինանսական ինստիտուտները մոբիլիզացրել են ավելի քան 15 միլիարդ եվրո արժողությամբ դրամաշնորհային և վարկային փաթեթ՝ բարեփոխումների գործընթացին աջակցելու համար՝ շարունակական առաջընթաց արձանագրելու խիստ պայմանով⁴⁸: Ուկրաինայի կառավարությունը ԵՄ-ին մերձեցման տեսանկյունից զգալի հաջողություններ է արձանագրել առևտրի, մաքսատուրքերի, մտավոր սեփականության և սոցիալական քաղաքականության ոլորտներում⁴⁹:

Ուկրաինան նաև հաջողությամբ իրականացրել է պետական գնումների ոլորտի բարեփոխումներ՝ արձանագրելով բյուջետային գործարքների և գնումների շահառուների թափանցիկության ավելի բարձր մակարդակ: 2015թ. դեկտեմբերին Գերագույն ռադան ընդունեց «Պետական գնումների մասին» օրենքը, իսկ 2016թ. փետրվարին ընդունվեց պետական գնումների ոլորտի բարեփոխումների ռազմավարությունը (ճանապարհային քարտեզ)՝ պետական օրենսդրությունը ԵՄ օրենսդրությանը համապատասխանեցնելու նպատակով⁵⁰: Այդուհանդերձ, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ իրավական մոտարկման տեսանկյունից նկատվել է

⁴⁵ **European Commission**, 2018, նշվ. աշխ.:

⁴⁶ Նույն տեղում:

⁴⁷ Նույն տեղում:

⁴⁸ EU-Ukraine relations – factsheet,

https://eeas.europa.eu/headquarters/headquarters-Homepage/4081/eu-ukraine-relations-factsheet_en (17.01.2020).

⁴⁹ **European Commission**, 2018, նշվ. աշխ.:

⁵⁰ **European Parliament**, 2017, նշվ. աշխ.:

դանդաղ առաջընթաց, քանի որ 2016թ. երկրորդ կեսի դրությամբ, ԵՄ-ի նախատեսած 126 իրավական ակտերից իրականացվել էին միայն 36-ը, որից միայն 23-ը՝ լիարժեք կերպով⁵¹:

Ընդհանուր առմամբ, Ուկրաինայի հետհեղափոխական պետականաշինության հաջողությունը և Զելենսկու օրակարգի իրականացումը զգալիորեն կախված են կոռուպցիայի դեմ պայքարի գործողությունների արդյունքներից:

Ցանկացած հասարակության ուսումնասիրության բանալին դրա ոչ ֆորմալ ինստիտուտներն են, որոնք ազդում են ինչպես տնտեսության, այնպես էլ քաղաքականության վրա: Ուկրաինայում այդպիսի կարևորագույն «ինստիտուտ» է էնդեմիկ կոռուպցիան, որը, Ռուսաստանի հետ ունեցած կոնֆլիկտից զատ, երկրի գլխավոր սպառնալիքներից է⁵²: Ակնհայտ է, որ Ուկրաինայում տարածված համակարգային կոռուպցիան խոչընդոտել է երկրի մոտարկմանը ԵՄ-ին՝ հանգեցնելով զարգացածության ցածր մակարդակի, վատ կառավարման և բարեփոխումներ իրականացնելու անկարողության: Արդյո՞ք Ասոնգացման համաձայնագրի իրականացումն էական հետևանքներ կունենա Ուկրաինայում խորն արմատացած ճգնաժամային իրավիճակի հաղթահարման գործում:

Պորոշենկոյի կառավարությունը բազմիցս խոստացել է պայքարել կոռուպցիայի դեմ և վերացնել դրա համակարգային բնույթը: 2015թ. Ուկրաինայի կառավարությունը ստեղծեց Կոռուպցիայի դեմ պայքարի Ազգային բյուրո, ինչպես նաև Կոռուպցիայի դեմ պայքարի հատուկ դատախազություն՝ հետաքննելու կոռուպցիայի դեպքերը: Ավելին, Պորոշենկոն ներկայացրել է Կոռուպցիայի դեմ պայքարի դատարանը՝ ուղղված արմատացած կոռուպցիայի վերացմանը⁵³: Պորոշենկոյի կառավարությունը զգալիորեն կրճատել է կոռուպցիան, մասնավորապես, զազի, բանկային և պետական

⁵¹ Նույն տեղում:

⁵² **Åslund A.**, *The Maidan and Beyond: Oligarchs, Corruption, and European Integration*, *Journal of Democracy*, 2014, 25, 3, 64-73.

⁵³ **Terzian A.**, նշվ. աշխ.:

գնումների ոլորտներում, սակայն փոքր առաջընթաց է գրանցվել դատական կոռուպցիայի դեմ պայքարում⁵⁴: Թեև Պորոշենկոն դատական բարեփոխումները հռչակել է որպես «բոլոր բարեփոխումների մայր»⁵⁵, այդուհանդերձ դա բավարար չէ այդ ոլորտում կառավարության հանձնառություններն ամրապնդելու համար: Դատական համակարգի բարեփոխումը շարունակեց նոր ձևավորված Գերագույն Դատարանը, որն իր աշխատանքները սկսել էր 2017թ. վերջին: Այդուհանդերձ, միայն մի քանի գործեր են հարուցվել խոշոր մասշտաբի կոռուպցիայի մեղադրանքով, և դրանցից ոչ մեկը չի վերաբերել բարձրաստիճան պաշտոնյաներին⁵⁶: 2013 թվականից ի վեր Ուկրաինան բարելավել է իր վարկանիշը «Թրանսփերենսի Ինթերնեշնլի» կոռուպցիայի ինդեքսի տվյալներով, սակայն 2018թ. դրությամբ այն առավել քիչ կոռումպացված 175 երկրների շարքում զբաղեցնում էր 120-րդ տեղը⁵⁷: Միաժամանակ, համատարած կոռուպցիան և իրավունքի գերակայության բացը զգալիորեն խարխլում են այլ բարեփոխումների ուղղությամբ Ուկրաինայի գրանցած ընդհանուր առաջընթացը⁵⁸: Ըստ էության, Պորոշենկոյի՝ որպես քաղաքական ուժի, կայուն անկումը զգալիորեն պայմանավորված էր կոռուպցիան վերացնելու ձախողմամբ: Ձեւենսկոյ վարկանիշը զգալիորեն բարձրացավ համաժողովրդական հիասթափության այդ ֆոնի վրա՝ կապված կոռուպցիան վերացնելու և կենսամակարդակը բարձրացնելու Պորոշենկոյի անկարողության հետ: Նախագահության սկզբնական շրջանում Ձեւենսկին կոռուպցիայի դեմ պայքարը դիտարկում էր որպես իր ներքին օրակարգի առաջնահերթություն: Նա նշում էր. «Իմ թիմի առջև դրված

⁵⁴ **European Commission**, 2018, նշվ. աշխ.:

⁵⁵ **Jarábik B., De Waal T.**, Ukraine Reform Monitor, *Carnegie Endowment for International Peace*, 2018, <https://carnegieendowment.org/2018/03/27/ukraine-reform-monitor-march-2018-pub-75909> (17.01.2020).

⁵⁶ **European Commission**, 2018, նշվ. աշխ.:

⁵⁷ **Terzyan A.**, նշվ. աշխ.:

⁵⁸ **Gressel G.**, Guarding the Guardians: Ukraine's Security and Judicial Reforms under Zelensky, *ECFR Policy Brief*, 2019, https://www.ecfr.eu/page/-/guarding_the_guardians_ukraine_security_and_judicial_reforms_under_zelensky.pdf (17.01.2020).

հիմնական խնդիրներն են կոռուպցիան արմատախիլ անելն ու անկախ դատական համակարգ ստեղծելը»⁵⁹:

Կոռուպցիայի դեմ ուղղված քարոզարշավի արդյունքում անցկացվել են հետաքննություններ նախկին նախագահ Պորոշենկոյի և նրա դաշնակիցների նկատմամբ⁶⁰: Ցանկանալով խթանել Ուկրաինայի նոր կառավարության՝ կոռուպցիայի դեմ պայքարը, ԵՄ-Ուկրաինա 21-րդ զագաթաժողովի ժամանակ ԵՄ հանձնակատար Հանն ուկրաինացի գործընկերների հետ ստորագրեց 109 միլիոն եվրոյի չորս ծրագիր ներառող համաձայնագիր՝ Հանձնաժողովի 2019 թվականի տարեկան աջակցության փաթեթից⁶¹:

Ընդհանուր առմամբ, հիմնարար տնտեսական բարեփոխումների իրականացումը մեծապես կապված է կառավարության ներուժի հետ՝ հաղթահարելու բյուրոկրատական դիմադրությունն ընդդեմ փոփոխությունների, վերացնելու համակարգային կոռուպցիան և նվազեցնելու խոշոր օլիգարխների զգալի ազդեցությունն Ուկրաինայում: Այսպիսով, Վլադիմիր Զելենսկու տնտեսական բարեփոխումների օրակարգի հաջողությունը զգալիորեն կախված է կոռուպցիայի դեմ պայքարի հաջողությունից:

Պաշտպանական ազգայնականություն: Ռուսաստանից հեռացումը և նոր ինքնության կերտումը

Հետմայրանի շրջանի պետականաշինությունն ուղեկցվեց Ռուսաստանից զգալի հեռացմամբ և դրա ընկալմամբ՝ որպես ազգի մեծագույն թշնամի: Ռուսաստանից հեռացման գաղափարը բորբոք-

⁵⁹ Ukraine President vows anti-corruption drive, says people tired of waiting for better life Armenia, <https://www.reuters.com/article/us-canada-ukraine/ukraine-president-vows-anti-corruption-drive-says-people-tired-of-waiting-for-better-life-idUSKCN1TX2DR> (10.11.2019).

⁶⁰ Ukraine's anti-corruption campaign targets Klitschko and Poroshenko, <https://www.dw.com/en/ukraines-anti-corruption-campaign-targets-klitschko-and-poroshenko/a-49816916> (17.01.2020).

⁶¹ **European Commission**, EU-Ukraine Summit: EU provides additional support to decentralisation, fight against corruption, empowerment of civil society and accountable and efficient governance in Ukraine, 2019, https://europa.eu/rapid/press-release_IP-19-3811_el.htm (17.01.2020).

վեց նաև ուկրաինական դիսկուրսում ազգայնականության տարրերի աճի արդյունքում: Ուկրաինայի ղեկավարությունը ազգայնականությունը և հայրենասիրությունը հաճախ ներկայացնում է որպես կարևոր պատենշ ռուսական իմպերիալիզմի և ագրեսիայի դեմ, քանզի «ազգին համախմբում է հայրենասիրությունը»⁶²: Ազգայնականությունը և հայրենասիրությունը դարձել են ծայրահեղ կարևոր՝ գոյատևելու և Ուկրաինայի տարածքային ամբողջականությունը վերականգնելու համար⁶³:

Ուկրաինայի դիսկուրսում Ռուսաստանի՝ որպես թշնամու, կերպարը դարձել է կարևոր չափանիշ սեփական ինքնության սահմանման և ազգային սահմանների երաշխավորման համար: Ռուսաստանը ներկայացվում է որպես Ուկրաինայի պետականության մեծագույն խոչընդոտ, որն անխուսափելիորեն պատճառ կդառնա, որ երկիրը հրաժարվի եվրոպական արտաքին քաղաքականության օրակարգից⁶⁴:

Կուլիկը նշում է, որ Յանուկովիչի ռեժիմի դեմ ժողովրդավարական բողոքի ակցիան ներառում էր ազգայնականության տարրեր՝ հիմքում ունենալով Ուկրաինայի ազատումը Ռուսաստանի թելադրանքից⁶⁵: Նա նաև պնդում է, որ խաղաղ բողոքի ցույցերից անցումը բռնի գործողությունների ուղեկցվում էր Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Ուկրաինայի խորհրդային օկուպացմանն ազգայնականների զինված դիմակայության ավանդույթի յուրացմամբ⁶⁶: Այդ յուրացումը չի սահմանափակվել բացառապես էթնիկ ուկրաինացիներով: Այն արտացոլել և ամրապնդել է

⁶² **Poroshenko P.**, In UN address, Ukraine President denounces Russia's 'aggressive expansionist policies', September 26, 2018, <https://news.un.org/en/story/2018/09/1020921> (17.01.2020).

⁶³ **Petro Poroshenko**: We will not forget crimes of Holodomor-genocide and perpetrators of those crimes <https://mfa.gov.ua/en/press-center/news/42800-ne-zabudemo-zlochiv-golodomorugenocidu-ta-jogo-vinuvatcivpetro-poroshenko>

⁶⁴ **Minakov M.**, Utopian Images of the West and Russia among Supporters and Opponents of the Euromaidan: Elements of Ideological Framing of the Conflict in Ukraine in 2013–2014, *Russian Politics & Law*, 53, 3), 2015, 68–85.

⁶⁵ **Kulyk V.**, Ukrainian Nationalism since the Outbreak of Euromaidan, *Ab Imperio*, 2014, 3, 94–122.

⁶⁶ Նույն տեղում:

նացիստների հետ ուկրաինիացի ազգայնականների համագործակցության սովետական առասպելի մերժումը⁶⁷: Դոնբասում զինված հակամարտության սրումը, որն էլ ավելի խորացրեց ուկրաինական ձգնաժամը, հանգեցրեց Ռուսաստանից հետագա օտարմանը:

Ուկրաինայի քաղաքական իշխանությունները Ռուսաստանի՝ որպես թշնամու, կերպարը ներկայացնում էին ընդհուպ որպես հակամարդասիրական: Ռուսաստանը հաճախ բնութագրվել է որպես երկիր, որն «աջակցում և ֆինանսավորում է ահաբեկչությունն ու անմարդկայնությունը ('non-humans'): Մասնավորապես, 2014թ. իր ելույթում վարչապետ Յացենյուկը Դոնբասի անջատողականներին որակում էր որպես «անմարդկային»: «Մենք հարգելու ենք հերոսների հիշատակը՝ մեր երկիրը մաքրելով չարիքից... Նրանք կորցրեցին իրենց կյանքը՝ պաշտպանելով տղամարդկանց և կանանց, երեխաներին և տարեցներին, ովքեր կանգնած էին զավթիչների ու նրանց հովանավորյալների ձեռքով սպանվելու վտանգի առջև...»⁶⁸:

Նույն կերպ, Պորոշենկոն Դոնբասի ցուցարարներին բնորոշում էր որպես «ահաբեկիչներ, հանցագործներ և անմարդկայիններ ('non-humans'), որոնց անհրաժեշտ է ոչնչացնել»⁶⁹: Ջարմանալի չէ, որ «անմարդկային» Ռուսաստանը հաճախ մեղադրվում է մի շարք վայրագությունների մեջ, այդ թվում՝ «ուկրաինացի երեխաներին որբացնելու, բանտերում հայրենասերներին խոշտանգելու և 1,5 միլիոն անձանց ներքին տեղահանված

⁶⁷ Նույն տեղում:

⁶⁸ **Yatsenuk A.**, “We will commemorate the heroes by cleaning our land from the evil,” June 15, 2014, <https://usa.mfa.gov.ua/en/press-center/news/24185-miuvichnimo-pamjaty-gerojiv-ochistivshi-nashu-zemlyu-vid-nechistiarsenij-jacenyuku-spivchutti-ridnim-i-blizykim-zagiblih-vojiniv-u-lugansyku> (17.01.2020).

⁶⁹ **Molchanov M.**, Russia as Ukraine's ‘Other’: Identity and Geopolitics in *Ukraine and Russia: People, Politics, Propaganda and Perspectives*, ed. by Agnieszka Pikulicka-Wilczewska and Richard Sakwa from <https://ssrn.com/abstract=2650162> (17.01.2020).

դարձնելու համար»⁷⁰: Հատկանշական է, որ Ուկրաինայի նախկին նախագահ Պորոշենկոն Ռուսական Կայսրությունը և Խորհրդային Միությունն ասոցացնում էր ներկայիս Ռուսաստանի հետ և այն ներկայացնում էր որպես անդառնալիորեն կայսերական, բռնի և զավթողական: Ըստ նրա, երկրի դեմ շարունակական ագրեսիան «Ուկրաինան այլ մեթոդներով ոչնչացնելու նույն քաղաքական գծի շարունակությունն է»⁷¹:

Հղում անելով Ռուսաստանի՝ որպես թշնամու կերպարին, Ուկրաինայի իշխանությունները փորձել են հաստատել Ուկրաինայի «զոհի» կարգավիճակը: Պորոշենկոն հաճախ մատնացույց է անում Հոլոդոմորի օրինակը՝ որպես վառ դրսևորում այն բանի, թե ինչպիսի փորձությունների միջով է անցել Ուկրաինան կայսերական Ռուսաստանի տիրապետության շրջանում: «Մենք պետք է հայտնենք ի լուր աշխարհի, որ չենք մոռանա Հոլոդոմոր-ցեղասպանության ընթացքում կատարված ոճրագործությունները: Ցեղասպանություն նախաձեռնողն այնքան բարոյական չէր, որ առնվազն ապաշխարեր կամ ճանաչեր խորհրդային բռնապետ Ստալինի օրոք կազմակերպված արհեստական սովը որպես ցեղասպանություն, որի արդյունքում Ուկրաինայում մահացան միլիոնավոր մարդիկ»⁷²:

Ուկրաինայի՝ զոհի կարգավիճակը հաստատելու համար Զելենսկին նաև ընդգծում է անկախության և ազատության համար մղվող անվերջ պայքարը, որը «սկսվել էր մոտ 100 տարի առաջ և շարունակվել Խորհրդային Միության տարիներին...»⁷³: Կայսերական Ռուսաստանի ձեռքում զոհի ներկայացումն ուղեկցվում էր Ուկրաինան Ռուսական կայսրությանը կապող բոլոր կապերը

⁷⁰ **Poroshenko P.**, In UN address, Ukraine President denounces Russia's 'aggressive expansionist policies', September 26, 2018, <https://news.un.org/en/story/2018/09/1020921> (17.01.2020).

⁷¹ Ukraine's Poroshenko Calls On Russia To 'Repent' For Holodomor, November 25, 2017, <https://www.rferl.org/a/ukraine-holodomor-poroshenko-commemoration/28876715.html> (17.01.2020).

⁷² Նույն տեղում:

⁷³ **Zelensky V.**, 2019, նշվ. աշխ.:

խզելու անհրաժեշտությամբ՝ «անկախությունն անդառնալի դարձնելու, հզոր և ուժեղ Ուկրաինա կառուցելու համար՝ առանց ռուսական ազդեցության վերականգնման որևէ հեռանկարի»⁷⁴: Այդ նպատակին հասնելու համար Ուկրաինայի իշխանություններն առաջ քաշեցին նաև երկրի հոգևոր անկախության հարցը՝ երաշխավորելու, որ, ինչպես նշում է Տարաս Շևչենկոն, «Ուկրաինան այլևս չիսմի Մոսկվայի թույնը՝ Մոսկվայի գավաթից»⁷⁵: Մասնավորապես, 2018թ. դեկտեմբերի 15-ին Ուկրաինայի նախագահ Պորոշենկոն հայտարարեց անկախ Ուկրաինայի Ուղղափառ եկեղեցու ստեղծման մասին և դա անվանեց «Մուրբ օր... Ռուսաստանից վերջնական անկախացման օր»⁷⁶: Ընդհանուր առմամբ, Ուկրաինայի քաղաքական դիսկուրսում Ռուսաստանը ներկայացվում է որպես ագրեսիվ, դաժան և անդառնալիորեն կայսերական՝ մարդու իրավունքների և Ուկրաինայի ինքնիշխանության նկատմամբ բացահայտ արհամարհական դիրքորոշմամբ⁷⁷:

Ուկրաինայի իշխանությունները մշտապես առաջ են քաշել «քաղաքակրթությունների բախման» թեզը՝ պնդելով, որ ռուսական մոդելն ի վերջո կձախողվի, քանի որ այն անհամատեղելի է ներկայիս Ռուսաստանի հետ, որը «չի կարողացել դառնալ փափուկ ուժ, սանձազերծել է իր ռազմական ուժը՝ զսպելու Ուկրաինայի նկրտումները արդիականացման և եվրոպական ինտեգրման ուղղությամբ»⁷⁸:

Պորոշենկոն հետևողականորեն փորձում էր ուկրաինական ճգնաժամը ներկայացնել Ռուսաստան-Արևմուտք/ԵՄ դիմակա-

⁷⁴ Zelensky V., 2019, նշվ. աշխ.:

⁷⁵ Poroshenko P., Speech by President Poroshenko on the results of the Unification Synod, December 21, 2018, <http://www.ukrweekly.com/uw/wp/speech-by-president-poroshenko-on-the-results-of-the-unification-synod/> (17.01.2020).

⁷⁶ Ukraine Orthodox priests establish independent Church, December 15, 2018, <https://www.bbc.com/news/world-europe-46575548> (17.01.2020).

⁷⁷ Molvhanov M, նշվ. աշխ.:

⁷⁸ Poroshenko P., Speech by President of Ukraine Petro Poroshenko at the Munich Security conference, February 9, 2015, <https://mfa.gov.ua/ua/press-center/news/32864-speech-by-president-of-ukraine-petro-poroshenko-at-the-munich-security-conference/> (17.01.2020).

յության շրջանակներում և նույնիսկ բնորոշում էր Ռուսաստանը որպես մեծագույն սպառնալիք ազատական ժողովրդավարությանը և եվրոպական արժեքային համակարգին⁷⁹: Պատահական չէ, որ Պորոշենկոն համախմբվելու կոչ էր անում ժողովրդավարական պետություններին՝ պնդելով, որ «ժողովրդավարությունները պետք է աջակցեն միմյանց» (Los Angeles Times, 2014): Այդ կոչը, մասնավորապես, ուղղված էր Միացյալ Նահանգներին և ԵՄ-ին՝ հաշվի առնելով այն, որ «Ուկրաինայի պայքարը Ռուսաստանի դեմ նաև «Միացյալ Նահանգների պատերազմն է»»⁸⁰: Ավելին, «նոր Ուկրաինայի դեմ Ռուսաստանի ագրեսիան դարձել է փորձություն եվրոպացիների համար. համերաշխության, միասնության, ազատության և ժողովրդավարության, ընդհանուր արժեքներին և սկզբունքներին հավատարմության փորձություն»⁸¹: Հատկանշական է, որ Պորոշենկոյի կառավարությունը պարբերաբար քայլեր է ձեռնարկել՝ սահմանափակելու խոսքի և լրատվամիջոցների ազատությունը՝ որպես արդարացում նշելով Ուկրաինայի արևելքում Ռուսաստանի ռազմական ագրեսիային դիմակայելու անհրաժեշտությունը և հակաուկրաինական քարոզչությունը⁸²: Մասնավորապես, 2014թ. Ներքին գործերի նախարարությունն արգելեց հեռարձակել ավելի քան տասնյակ ռուսական ալիքներ՝ նշելով, որ երկրի տեղեկատվական դաշտը պետք է պաշտպանված լինի Մոսկվայի «պատերազմի և բռնության քարոզչությունից»⁸³: Այդ քաղաքականությունը հետագայում շարունակվեց, և Ուկրաինայի իշխանությունները հաճախ գրաքննության էին ենթարկում

⁷⁹ Ukraine's fight with Russia is 'America's war, too,' Poroshenko says September 18, 2014, <https://www.latimes.com/nation/la-na-poroshenko-address-congress-20140918-story.html> (17.01.2020).

⁸⁰ Նույն տեղում:

⁸¹ **Poroshenko**, 2015, նշվ. աշխ.:

⁸² **Terzyan A.**, Beyond the revolutions: Ukraine and Armenia between authoritarian resistance and authoritarian legacy, September <https://emerging-europe.com/voices/beyond-the-revolutions-ukraine-and-armenia-between-authoritarian-resistance-and-authoritarian-legacy/>).

⁸³ **Freedom House**, Freedom in the World 2018: Ukraine, <https://freedomhouse.org/report/freedom-world/2018/ukraine> (17.01.2020).

ռուսական լրատվական աղբյուրներ և արգելում առանձին ռուս լրագրողների մուտքը երկիր⁸⁴:

Զարմանալի չէ, որ «հոգևոր անկախության» հետ մեկտեղ, Ուկրաինայի իշխանությունները զգալիորեն շեշտադրում են ուկրաիներեն լեզուն՝ «որպես ուկրաինացի ժողովրդի ուժի և հաջողության բաղկացուցիչ մաս և միասնության բանալի⁸⁵: 2014 թվականից ի վեր ռուսախոսների նկատմամբ աճող խտրականության պայմաններում լեզվի խնդիրը դարձել է շատ ավելի զգայուն: Որոշ ուկրաինախոսներ պնդում են, որ ռուսերեն լեզվի գերակայությունը խորհրդային դարաշրջանի ժառանգություն է, որը խարխլում է Ուկրաինայի ինքնությունը: 2019 թվականի ապրիլին Ուկրաինայի խորհրդարանն ընդունեց լեզվի մասին օրենք, որի համաձայն բոլոր քաղաքացիները պետք է իմանան ուկրաիներեն: Դա պարտադիր պահանջ է քաղաքացիական ծառայողների, զինվորների, բժիշկների և ուսուցիչների համար⁸⁶: Օրենքով սահմանված են պարտադիր լեզվական քվոտաներ պետական և մասնավոր հեռուստատեսությունների հեռարձակումների համար: Տպագիր մամուլում հրապարակումների առնվազն կեսը պետք է լինի ուկրաիներեն: Նախագահի, խորհրդարանի խոսնակի, ինչպես նաև օրենսդիր մարմնի բոլոր ներկայացուցիչների, նախարարների, պետական անվտանգության ծառայության պետերի, գլխավոր դատախազի, Ուկրաինայի ազգային բանկի ղեկավարի և տեղական խորհրդի անդամների պաշտոնների համար պահանջվում է ուկրաիներենի ազատ տիրապետում: Ուկրաիններենը բոլոր պաշտոնական փաստաթղթերի, դատական արձանագրությունների, ընտրությունների և հանրաքվեների, միջազգային պայմանագրերի և աշխատան-

⁸⁴ Նույն տեղում:

⁸⁵ The Ukrainian language (dis)connects: what language policy do Zelensky and Poroshenko have? April 17, 2019, <https://opinionua.com/en/2019/04/17/the-ukrainian-language-disconnects-what-language-policy-do-zelensky-and-poroshenko-have/> (17.01.2020).

⁸⁶ Ukraine passes language law, irritating president-elect and Russia, April 25, 2019, <https://www.reuters.com/article/us-ukraine-parliament-language/ukraine-passes-language-law-championed-by-outgoing-president-idUSKCN1S111N> (17.01.2020).

քային համաձայնագրերի պարտադիր լեզուն է⁸⁷: Օրենքի ընդունման կողմնակիցներն այն դիտում էին որպես ազգային ինքնության ամրապնդման համար անհրաժեշտ քայլ, մինչդեռ ոմանք այն ընկալում էին որպես պատրվակ՝ Ուկրաինայի բնիկ ռուսախոսներին ձայնի իրավունքից զրկելու համար⁸⁸:

Կուլիկը նշում է, որ Ռուսաստանի քաղաքականությունը հետագայում նպաստեց ուկրաինական ազգայնականության ներառականության բարձրացմանը, որն այժմ ընդգրկում է ռուս և ռուսախոս բազմաթիվ քաղաքացիների: Որպես պետություն և նույնիսկ որպես ժողովուրդ, լինելով օտարված Ռուսաստանից՝ վերջինիս ագրեսիվ քաղաքականության պատճառով, այդ քաղաքացիներն այդուհանդերձ չեն հեռացել ռուսերեն լեզվից: Ուստի, ուկրաինացիների և ռուսների միջև նոր սահմանը ոչ թե լեզվական է, այլ՝ քաղաքական⁸⁹:

Սաբատովիչն իրավացիորեն նշում է, որ ամբողջ աշխարհում «ժողովրդավարական հեղափոխությունների» աճող թիվն առաջ է բերել այն հարցը, թե ինչպես է զանգվածային մոբիլիզացիան նպաստում ժողովրդավարությանը և թե ինչ դեր ունի ազգայնականությունն այդ գործընթացում: Նշվում է, որ թեև զանգվածային մոբիլիզացիան դիտարկվում է որպես կոմունիստական վարչակարգերի տապալման լավագույն տարբերակ, զանգվածային մոբիլիզացիոն շարժումների հեղափոխական բնույթը, ժողովրդավարության և ազգայնականության միջև անորոշ կապի հետ միասին, կարող է բացասաբար ազդել ժողովրդավարացման վրա⁹⁰: Ուկրաինայի

⁸⁷ Russia, West Clash During UN Session On Ukraine's Language Law, July 16, 2019,

<https://www.rferl.org/a/law-on-ukraine-state-language-comes-into-force/30057943.html> (17.01.2020).

⁸⁸ Ukraine adopts language law opposed by Kremlin, April 25, 2019,

<https://www.theguardian.com/world/2019/apr/25/ukraine-adopts-law-enforcing-use-of-ukrainian-in-public-life> (17.01.2020).

⁸⁹ Kulyk V., նշվ. աշխ.:

⁹⁰ Sabatovych I., Does Nationalism Promote Democracy? Comparative Analyses of Ukraine's 'Maidan' Revolution and Poland's 'Solidarity' Mass Mobilisation, *Contemporary Politics*, 2018, 24, 2, 131-52.

Մայրանի հեղափոխության և Լեհաստանի «Համերաշխություն» շարժման միջև համեմատական վերլուծության իրականացման արդյունքում եզրակացվում է, որ Ուկրաինայում տեղի ունեցած գանգվածային շարժումները, ի տարբերություն Լեհաստանի, չեն հանգեցրել ժողովրդավարացմանը, այլ քաղաքական էլիտաների և քաղաքացիական հասարակության բևեռացմանը⁹¹:

Մոլչանովը նշում է, որ քաղաքական մոբիլիզացումն «ազդեցոր Ռուսաստանի» դեմ լավագույն դեպքում կարող է լինել քաղաքացիական միասնության խնդրի ժամանակավոր լուծում⁹²: Այլ կերպ ասած, քաղաքացիական հասարակության համախմբումը և հիմնարար տնտեսական ու քաղաքական բարեփոխումների իրականացումը կարևորագույն նշանակություն ունեն Ուկրաինայի պետականության ամրապնդման և Ռուսաստանի քաղաքակա- նության դեմ դրա դիմակայության մեծացման համար:

Եզրակացություն

Հոդվածի նպատակն է հարստացնել հետխորհրդային հասարակություններում հետհեղափոխական պետականաշինության հետագծի վերաբերյալ առկա գրականությունը՝ Ուկրաինայի դեպքի ուսումնասիրության ճանապարհով: Ուսումնասիրության արդյունքում առանձնացվել են երեք հիմնական դիտարկումներ.

Առաջինը վերաբերում է Ուկրաինայում ժողովրդավարական բարեփոխումների խորությանն ու ընդգրկմանը: Ժողովրդավարության կայացման ճանապարհին հիմնական մարտահրավերներն են ժողովրդավարական ինստիտուտների թուլությունը, ավտորիտար ժառանգությունը, օլիգարխների մնացորդային ազդեցությունը և այլն: Ներպետական փոփոխությունները դրական ազդեցություն ունեն ԵՄ-ին մոտարկման վրա, իսկ ժողովրդավարական բարեփոխումների խորությունը կախված է Ուկրաինայի իշխանու-

⁹¹ Նույն տեղում:

⁹² Molchanov M., նշվ. աշխ.:

թյունների՝ ժողովրդավարական ինստիտուտներ զարգացնելու և ավտորիտար կառավարումը վերացնելու ներուժի հետ: Դա, իր հերթին, մեծապես կախված է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման հետ, որոնք ի վիճակի կլինեն կառավարությանը դարձնել հաշվետու:

Երկրորդ, Մայդանի հեղափոխության տնտեսական հետևանքների առումով հիմնական ձեռքբերումները վերաբերում են էներգետիկ ոլորտին, պետական գնումներին, հարկային բարեփոխումներին, ինչպես նաև գործարար միջավայրի և ներդրումային միջավայրի բարելավմանը: Առավել հատկանշական է այն, որ Ուկրաինայի իշխանությունները զգալի քայլեր են ձեռնարկել երկրի կոռուպացված էներգետիկ ոլորտը վերափոխելու և Ռուսաստանի «էներգետիկ զենքին» դիմակայելու գործում: Ուկրաինայի հետևողականությունը ԵՄ քաղաքականության նկատմամբ հանգեցրել է ԵՄ-ին զգալի մոտարկմանը՝ առևտրի, մաքսային և սոցիալական քաղաքականության և այլ ոլորտներում:

Ընդհանուր առմամբ, ձեռքբերումների շարունակականությունը և ավելի հավակնոտ տնտեսական բարեփոխումների իրականացումը մեծապես կապված են փոփոխությունների նկատմամբ բյուրոկրատական դիմադրությունն ու համակարգային կոռուպցիան հաղթահարելու, ինչպես նաև Ուկրաինայի տնտեսության վրա օլիգարխների ազդեցությունը նվազեցնելու հետ:

Երրորդ, հետմայդանի պետականաշինության գաղափարական արդյունքները բնութագրվում են ազգայնականության աճի և Ռուսաստանից զգալի հեռացման ընդգծված շեշտադրումներով: Ռուսաստանի հետ հակամարտությունը ներկայացնելով որպես «քաղաքակրթությունների բախում»՝ Ուկրաինայի իշխանությունները ազգայնականությունը դիտարկել են որպես կարևոր գործիք ռուսական «փմպերիալիզմի» դեմ: Ընդհանուր առմամբ, Մայդանի հեղափոխությունից հետո Ռուսաստանի՝ որպես թշնամու, կերպարը դարձել է վճռական չափանիշ սեփական ինքնության սահմանման և Ուկրաինայի քաղաքական դիսկուրսում ազգային միասնության ամրապնդման համար:

From Domestic Change to Reform and New National Narrative: Ukraine after the Maidan Revolution

ARAM TERZYAN

*Eurasian Research and Analysis Institute, USA
Brusov State University, Armenia*

The article explores post-Maidan state-building in Ukraine, with a focus on the core material and ideational outcomes of the 2014 revolution. By examining the case of Ukraine it shows the challenges and opportunities of political and economic transformations in post-revolution societies amid constraining external conditions. It suggests that political and economic reforms underlying post-Maidan Ukraine's state-building significantly owe to country's profound advancement towards the European Union (EU). Meanwhile the core obstacles to democracy consolidation range from weakness of democratic institutions and civil society organizations to authoritarian legacy and lingering oligarchic influence, compounded by the devastating effects of separatism. The article concludes that the domestic change in Ukraine has been positively correlated with its approximation towards the European Union, as well as with substantial othering of Russia.